ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2014- 14.03/101
14.03.2014 թ.

ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանին
Դիմումատու՝
«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ» ՀԿ
Պետական ռեգիստրի վկայական
03 Ա 0704086
ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր, 2001
Տիգրան Մեծի 59
Պատասխանողներ՝
ՀՀ Հատուկ քննչական ծառայություն
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5

ՀՀ գլխավոր դատախազություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան փ. 5

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔ

(ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. մարտի 4-ի որոշման դեմ)

2014թ. մարտի 4-ին ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը նախագահող դատավոր՝ Մ. Մակարյանը (այսուհետ դատարան) քննության առնելով «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի» Վանաձորի գրասենյակի (այսուհետ Կազմակերպություն) նախագահ Արթուր Սաքունցի դիմումն ընդդեմ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Մ. Բաբայանի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2013թ. հոկտեմբերի 31-ի կայացրած քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ, որոշում է կայացրել այն ամբողջությամբ մերժելու մասին:

1.Գործի դատական նախապատմություն

1.1. 2013թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ, «Հայոց արծիվներ» հասարակական կազմակերպության ղեկավար Խաչիկ Ասրյանը «Yerkir.am»-ի (լրատվական կայք) հետ զրույցի ժամանակ բռնության սպառնալիքներ է հնչեցրել ՀՀ ԱԺ պատգամավոր Զարուհի Փոստանջյանի և նրա հարազատների նկատմամբ:

1.2. 2013թ. հոկտեմբերի 14-ին «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազին, որում, մասնավորապես նշվում է, որ Խ.Ասրյանի 2013թ. հոկտեմբերի 10-ին հայտարարությունը Զ. Փոստանջյանի հասցեին սպառնալիք է, որը ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի հատկանիշներով առաջացնում է պատասխանատվություն:

1.3. 2013թ. հոկտեմբերի 29-ին Զ. Փոստանջյանը դիմում է ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին հայտնելով այն մասին, որ միանում է Կազմակերպության 14.10.2013թ. հաղորդումին և խնդրել է ձեռնարկել համապատասխան միջոցներ Խ. Ասրյանին պատասխանատվության ենթարկելու համար:

1.4. 2013թ. հոկտեմբերի 31-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևորագույն գործերով քննիչ Մ. Բաբայանի կողմից կայացվել է որոշում քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

1.5. 2013թ. նոյեմբերի 12-ին Կազմակերպության կողմից ներկայացվել է դիմում-բողոք ՀՀ գլխավոր դատախազություն, որով խնդրել եմ վերացնել նախաքննության մարմնի 2013թ. հոկտեմբերի 31-ին կայացրած քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը և գործը ուղարկել նախաքննության:

1.6. 2013թ. նոյեմբերի 20-ին ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանի կողմից կայացվել է որոշում բողոքը մերժելու մասին:

1.7. 2013թ. դեկտեմբերի 17-ին Կազմակերպության կողմից դիմում է ներկայացվել ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան պահանջելով, վերացնել ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Մ. Ա. Բաբայանի 2013թ. հոկտեմբերի 31-ի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը և գործն ուղարկել նախաքննության:

1.8. 2014թ. մարտի 4-ին ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացվել է որոշում Կազմակերպության դիմումն ընդդեմ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Մ. Բաբայանի 2013թ. հոկտեմբերի 31-ի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման վերացնելու պահանջը մերժելու մասին:

1.9. 2014թ. մարտի 4-ին Դատարանի կողմից կայացված որոշումը Կազմակերպության կողմից ստացվել է 2014թ. մարտի 11-ին:

2. ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Մ. Ա. Բաբայանի 2013թ. հոկտեմբերի 31-ի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման պատճառաբանությունը.

Քննիչը Կազմակերպության և Զ. Փոստանջյանի դիմումների քննարկման և մի շարք լրատվական միջոցներով Խ.Ասրյանի կատարած հայտարարությունները ուսումնասիրելու արդյունքում պարզել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը բացակայում է, քանզի Խ.Ասրյանի արած հայտարարություններում բացակայում է սպառնալիքի կոնկրետությունը և սպառնալիքի իրական լինելը:

Սպառնալիքի կոնկրետությունը քննարկվող հանցակազմի պարտադիր հատկանիշներից մեկն է, այսինքն՝ այն հանգամանքի հստակությունը, թե ինչպիսի վնաս է սպառնում պատճառել հանցավորը:

Հանցակազմի մյուս պարտադիր հատկանիշն է՝ սպառնալիքի իրական լինելը: Սպառնալիքը իրական է համարվում, երբ տուժողը բավարար հիմքեր է ունենում անհանգստանալու, վախենալու դրա իրականացումից, կարծում է, որ տրված սպառնալիքի իրականացումը հնարավոր է:

Խ. Ասրյանի կողմից զանգվածային լրատվական միջոցներով Զ. Փոստանջյանի հասցեին հրապարակած մի շարք արտահայտություններ սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու իրական սպառնալիք չեն հանդիսացել, դրանք իրականացնելու իրական վտանգ չի եղել, որի պայմաններում արարքում հանցակազմը բացակայում է:

<u>3. Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը</u>

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական նորմերի խախտման վերաբերյալ պնդումներ.

3.1 ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանի լիազորություններն են (...) օրենքով նախատեսված դեպքերում քննել և լուծել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի, օպերատիվ հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները»:

3.1.1. Հետաքննության մարմինը չի ձեռնարկել համապատասխան միջոցներ հաղորդման մեջ նշված հանգամանքները պարզելու համար, մասնավորապես Խ. Ասրյանը նյութերի նախապատրաստական փուլում չի հրավիրել բացատրություններ տրամադրելու համար այլ նախաքննության մարմինը որոշում կայացնելիս հիմք է ընդունել լրատվական միջոցներով Խ. Ասրյանի արած հայտարարությունները: Նախաքննության մարմնի կողմից Զարուհի Փոստանջյանը բացատրություններ տալու նույնպես չի հրավիրվել, նրանից չի պարզաբանվել,

թե Խ. Ասրյանի հրապարակային սպառնալիքներից բացի կային արդյո՞ք այլ սպառնալիքներ, որոնք չէին հրապարակվել լրատվական միջոցներով:

3.1.2. Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման պատճառաբանական մասում որոշման հեղինակը նշել է. «հանցակազմի մյուս պարտադիր հատկանիշը սպառնալիքի իրական լինելն է: Այն իրական է համարվում, երբ տուժողը բավարար հիմքեր է ունենում անհանգստանալու, վախենալու դրա իրականացումից (....):Սպառնալիքի իրական լինելը որոշվում է ինչպես օբյեկտիվ իրադրության գնահատմամբ այնպես էլ տուժողի սուբյեկտիվ ընկալումը հաշվի առնելով»: Նախաքննության մարմնը չէր կարող միայն լրատվական միջոցներով հրապարակված նյութերը ուսումնասիրելով զալ եզրակացության սպառնալիքի իրական լինելու վերաբերյալ: Նախաքննության մարմինը պարտավոր էր բացատրություններ վերցնել Զ. Փոստանջյանից պարզելու համար, նա սպառնալիքը իրական է համարում, թե ոչ և նա բավարար հիմքեր ունի սպառնալիքից անհանգստանալու և վախենալու, որ այն կարող է իրականանալ:

2013թ. հոկտեմբերի 11-ին Զ. Փոստանջյանը մտահոգվելով իր անվտանգության համար, դիմում է ներկայացրել ՀՀ ոստիկանության պետ Վ. Գասպարյանին, խնդրելով ապահովել իր և իր ընտանիքի անդամների անվտանգությունը: Ոստիկանապետը հիմնավոր համարելով Զ. Փոստանջյանի մտահոգությունը, վերջինիս անվտանգությունը ապահովելու ուղղությամբ ձեռնարկել է համապատասխան միջոցներ:

2013թ. հոկտեմբերի 16-ին «azatutyun.am» լրատվական կայքում տեղադրվել է «Փոստանջյանը պահանջում է կալանավորել Խաչիկ Ասրյանին» վերնագրով տեսանյութը, որում ակնհայտ երևում է, թե ինչպես են ոստիկանության աշխատակիցները ապահովում Զ. Փոստանջյանի անվտանգությունը[1]: Վերոգրյալից պարզ է դառնում, որ քննարկվող հանցակազմի պարտադիր հատկանիշ՝ սպառնալիքի իրական լինելն առկա է, քանի որ դրա բացակայության դեպքում ՀՀ ոստիկանապետը Զ. Փոստանջյանի խնդրանքը կմերժեր և ոստիկանության աշխատակիցները չէին ապահովի նրա անվտանգությունը:

Համաձայն վերոհիշյալ մեկնաբանությունների, նախաքննության մարմինը պարտավոր էր օբյեկտիվ քննություն իրականացնել, որի կարևոր հանգամանքներից է համարվում գործով բոլոր մասնակիցներին բացատրություններ տալու հրավիրելը կամ, որոնց կողմից տրված տեղեկությունները կարող են էական նշանակություն ունենալ գործի արդարացի լուծման համար: Սույն գործի շրջանակներում՝ Խ. Ասրյանին բացատրություն տալու հրավիրելու արդյունքում վերջինս կարող էր հերքել կամ հաստատել Կազմակերպության կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդման փաստերը, ինչպես նաև Զ. Փոստանջյանին բացատրության հրավիրելու արդյունքում հնարավոր կլիներ պարզել, արդյոք քննարկվող հանցակազմում բացակայում է, թե առկա է սպառնալիքի իրական լինելու հանգամանքը, որը պարտադիր հատկանիշ է քննարկվող հանցակազմի համար:

3.1.3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ «հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու

[1]. (Տես՝ http://www.azatutyun.am/content/article/25138581.html):

յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար: (.....):

Նախաքննության մարմնի կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդման շրջանակներում չի ձեռնարկվել օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար, որը Դատարանի կողմից հաշվի չի առնվել:

Նախաքննության և դատաքննության մարմինների կողմից վերը թվարկված անգործության կամ դիտավորյալ գործողությունների արդյունքում չի ապահովվել ՀՀ Սահմանադրության 18-րդ և Եվրոպական կոնվեցիայի 13-րդ հոդվածներով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

4. Դատարանը վիճարկվող որոշման 9-րդ էջում վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ և 55-րդ հոդվածները հանգել է հետևյալ հետևության՝ «քննիչն ինքն է իր իրավասության սահմաններում կատարաում լրիվ, բազմակողմանի և օբեկտիվ քննության, ընդունում ինքնուրույն որոշումներ և ուղղություն տալիս քննությանը ու իր հայացողությամբ կատարում անհրաժեշտ քննչական անհետաձգելի գործողություններ»:

Դատարանը վերը վկայակոչված մեկնաբանությամբ հակասում է ՀՀ ձևավորված իրավակիրառ պրակտիկային և մինչ դատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարևորագույն բաղադրիչը անտեսվել է սույն դատական ակտում տեղ գտած մեկնաբանությամբ:

Այսպես՝ ՀՀ Սահմանադրական դատարանը իր 2009թ. դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-844 որոշման 5-րդ կետում հայտնել է, որ մինչդատական վարույթում հետաքննություն և նախաքննություն մարմինների, (...) որոշումների և գործողությունների դատական բողոքարկման ինստիտուտը (ՀՀ քր. դատ. օրենսգրքի 278 հոդվածի 2-րդ մաս, 290 հոդված) որպես քրեական վարույթում անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջոց կոչված է երաշխավորելու ՀՀ Սահմանադրության ինչպես 18 և 19 հոդվածներում, այնպես էլ 3, 14, 14.1, 16, 17 և անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրաիրավական սկզբունքի գերակայությունն արտացոլող բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված նորմերի կենսագործումը: Այն կոչված է ապահովելու անձի ինչպես սահմանադրական, այնպես էլ օրենքով երաշխավորված այլ իրավունքները, ազատությունները՝ վերոհիշյալ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց անօրինական (անիրավաչափ) որոշումներից ու գործողություններից և իրացվում է արդարադատական առանձնահատուկ գործառույթի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության միջոցով:

Վկայակոչված որոշմամբ դատարանը հայտնել է, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, վերջինիս՝ «դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ» վերտառությունը կրող 39-րդ գլխի նորմերի համալիր վերլուծությունը վկայում է, որ հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական

գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքների քննությունը, որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործառույթ, ունի իր առանձնահատուկ խնդիրներն ու նպատակները, մասնավորապես՝ բողոքարկվող որոշումների և գործողությունների օրինականությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և օրենսդրության այլ ակտերի պահանջներին համապատասխանությունը) ստուգելու արդյունքում պարզել անձի (կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության այլ մասնակցի կամ այլ անձի) իրավունքների և ազատությունների խախտման փաստը և կայացնել համապատասխան որոշում՝ անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության, կամ բողոքը մերժելու վերաբերյալ:

(...) Մասնավորապես քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, (...) որոշումները և գործողությունները բողոքարկող սուբյեկտներ են քրեական դատավարության մասնակիցները և այլ անձինք, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով: Հիշյալ հոդվածի նույն մասի համաձայն քրեական գործերով մինչդատական վարույթում որպես դատական բողոքարկման անմիջական օբյեկտ (առարկա) են հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, (...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումները և գործողությունները, այսինքն՝ այնպիսի որոշումներ ու գործողություններ, որպիսիք հատկապես մատնանշված են օրենսգրքի համապատասխան նորմերում:

5. Վերաքննիչ բողոքի պահանջը.

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 209-րդ, 376, 378 և 381 հոդվածների պահանջները.

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ, բեկանել ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. մարտի 4-ին որոշումը, ընդունել նոր դատական ակտ, վերացնել ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Մ. Բաբայանի 2013թ. հոկտեմբերի 31-ի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը:

Կից ներկայացնում եմ՝

1. ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. մարտի 4-ի որոշման պատճենը:

2. Վերաքննիչ բողոքի օրինակը, դատական ակտ կայացրած դատարանին, ՀՀ հատուկ քննչական ծառայությանը և ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկելու վերաբերյալ փոստային կտրոնների պատճենները:

3. ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. մարտի 4-ի որոշումը 2014թ. մարտի 11-ին ստանալը հավաստող փոստային ծրարի պատճենը:

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ք. Երևան, Տիգրան Մեծի 23/1 **հեռ. (010) 54-79-08**

ԵԿԴ/0210/11/13
ԴԴ-17-Ե-6572
06.03.2014թ

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ
/ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59/

Ուղարկում եմ թիվ ԵԿԴ/0210/11/13 բողոքի վերաբերյալ դատարանի 2014 թվականի մարտի 4-ին կայացրած որոշման օրինակը:

Առդիր որոշումը՝ «10» թերթից:

ԴԱՏԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ՝ ***Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ***

Գործ թիվ
ԵԿՈ/0210/11/14

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԲՈՂՈՔԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

,,04,, մարտի 2014թ. ք. Երևան

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԸ՝

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԴԱՏԱՎՈՐ Մ. ՄԱԿՅԱՆԻ

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

«Հելսինկյան Քաղաքացիական
Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»
ՀԿ նախագահ՝ Ա. Սաքունցի

դռնբաց դատական նիստում, Երևան քաղաքում, քննելով «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ նախագահ Արթուր Սաքունցի դիմումը՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Մ.Բաբայանի կողմից 31.10.2013թ.-ին կայացված՝ «Քրեական գործի հարուցումը մերժելու մասին» որոշման դեմ՝

Պ Ա Ր Զ Ե Տ

Ըստ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Մ.Բաբայանի կողմից 31.10.2013թ.-ին կայացված՝ «Քրեական գործի հարուցումը մերժելու մասին» որոշման՝ վերջինս, քննարկելով «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ նախագահ Արթուր Սաքունցի կողմից ՀՀ գլխավոր դատախազին ուղղված 2013թ.-ի հոկտեմբերի 14-ի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերը պարզել է հետևյալը.

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցը 2013թ. հոկտեմբերի 14-ի գրությամբ դիմել է ՀՀ գլխավոր դատախազին, որով խնդրել է ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի հատկանիշներով հարուցել քրեական գործ և ՀՀ երիտասարդության և սպորտի հարցերի նախարարի տեղակալ Խաչիկ Ասրյանին ենթարկել պատասխանատվության վերջինիս կողմից 2013թ. հոկտեմբերի 10-ին

«Yerkir.am» լրատվական կայքում հարապարակված հայտարարությամբ ՀՀ ԱԺ պատգամավոր Զարուհի Փոստանջյանին և նրա հարազատներին ուղղված բռնության սպառնալիքներ տալու համար:

Արթուր Սաքունցի դիմումի հիման վրա նյութերի նախապատրաստումը հանձնարարվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությանը:

2013թ. հոկտեմբերի 29-ին ստացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին ուղղված՝ ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Զարուհի Փոստանջյանի թիվ ԺԽ-Ե-0287/13 դիմումը, որում նա հայտնել է, որ միանում է Արթուր Սաքունցի կողմից հանցագործության մասին հաղորդմանը և խնդրում ձեռնարկել անհապաղ միջոցներ Խաչիկ Ասրյանին պատասխանատվության կանչելու համար:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ ՀՀ Երիտասարդության և սպորտի հարցերի նախարարի տեղակալ Խաչիկ Ասրյանը 2013թ. հոկտեմբերի 10-ին «Yerkir.am» լրատվական կայքի լրագրողի հետ զրույցի ընթացքում անդրադառնալով ՀՀ ԱԺ պատգամավոր Զարուհի Փոստանջյանի կողմից ԵԽԽՎ,-ում ՀՀ Նախագահին ուղղված հարցին՝ բառացիորեն հայտարարել է. «...ցանկանում է, որ իր խոսքերը լինեն ավելի կոշտ, կոպիտ, և այն ուղղում է ո՛չ թե Զարուհի Փոստանջյան քաղաքացուն, ո՛չ թե Զարուհի Փոստանջյան կնոջը, ո՛չ թե Զարուհի Փոստանջյան մորը, այլ՝ «ոմն Զարուհի Փոստանջյան» քաղաքական գործչին...»: Ապա Խաչիկ Ասրյանը շարունակել է. «Նույն Զարուհի Փոստանջյանին խարույկի վրա կենդանի պետք է այրել, ո՛չ թե որպես ժաննա դ՛Արկի, այլ՝ որպես Ռամիլ Սաֆարովի»:

Խաչիկ Ասրյանի վերը նշված հայտարարությունը «Yerkir.am» լրատվական կայքում հրապարակվել է 2013թ. հոկտեմբերի 10-ին՝ ժամը 16:20-ին:

Ընդամենը ժամեր անց՝ 2013թ. հոկտեմբերի 11-ին, Խաչիկ Ասրյանը՝ պարզաբանելով իր արտահայտած միտքը, զանգվածային լրատվության միջոցներով նոր հայտարարություն է տարածել, որում բառացիորեն նշել է. «Հայտնում եմ, որ Զարուհի Փոստանջյանին խարույկի վրա այրելու վերաբերյալ հեղինակավոր էլեկտրոնային yerkir.am կայքում արտահայտած իմ խոսքերը բացառապես փոխաբերական իմաստ են արտահայտել՝ Զարուհի Փոստանջյանների մեջ հայոց պետականության հանդեպ ունեցած իրենց կենսական ու կենցաղային ատելությունը վերացնելու և ընդհանուր առմամբ Զարուհի Փոստանջյանին սթափեցնելու, այլ պարագաներում նույնպես, նմանատիպ սխալներ չկրկնելու համար: Խոսքերիս չափազանցված խստությունը աննպատակ չի եղել, քանզի ես նկատի եմ ունեցել խարույկի վրա այրել ոչ թե Զարուհի Փոստանջյանի ֆիզիկական մարմինը, այլ նրա կատարած արարքը, երևույթը»:

Խաչիկ Ասրյանը 2013թ. հոկտեմբերի 26-ին «News.am» լրատվական կայքում կրկին հայտարարություն է տարածել այն մասին, որ. «...որևէ մեկը, լինի իգական, թե արական սեռի, ով այսուհետ ևս փորձի օտար պետություններում իմ պետության, իմ ժողովրդի, իմ նախագահի պատիվն ու արժանապատվությունը ոտնահարել, արժանանալու է ավելի կոշտ և կոպիտ պատասխանների և գործողությունների, որոնք ես հիմա չեմ մանրամասնի»:

Արթուր Սաքունցի, Զարուհի Փոստանջյանի դիմումների քննարկման և զանգվածային լրատվության միջոցներով տարածված Խաչիկ Ասրյանի հայտարարությունների ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ վերջինիս արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիք տալու հանցակազմը՝ հետևյալ պատճառներով.

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով հանցագործություն է համարվում սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել:

Ակնհայտ է, որ քննարկվող հանցակազմի պարտադիր հատկանիշներից է սպառնալիքի կոնկրետությունը՝ այսինքն, այն հանգամանքի հստակությունը, թե ինչպիսի վնաս է սպառնում պատճառել հանցավորը: Հանցակազմի մյուս պարտադիր հատկանիշը սպառնալիքի իրական լինելն է: Այն իրական է համարվում, երբ տուժողը բավարար հիմքեր է ունենում անհանգստանալու, վախենալու դրա իրականացումից, կարծում է, որ տրված սպառնալիքի իրականացումը հնարավոր է: Սպառնալիքի իրական լինելը որոշվում է ինչպես օբյեկտիվ իրադրության գնահատմամբ /սպառնալիքի բովանդակությունը, այն տալու եղանակը, դեպքի վայրը, ժամանակը, իրադրությունը,

հանցավորի անձը և այլն/, այնպես էլ տուժողի սուբյեկտիվ ընկալումը հաշվի առնելով: Պետք է նկատի ունենալ, որ տուժողի սուբյեկտիվ ընկալումն ամեն դեպքում արարքի որակման համար ածանցյալ նշանակություն ունի, առաջնային օբյեկտիվ իրադրության գնահատումն է:

Քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը պետք է գիտակցի, որ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիք է արտահայտում, նախատեսի հանրության համար դրա վտանգավոր հետևանքները և ցանկանա դրանց վրա հասնելը:

Կոնկրետ դեպքում, դեռևս 2013թ. հոկտեմբերի 10-ին Խաչիկ Ասրյանը մինչև «խարույկի վրա այրելու» իր խոսքերին անցնելը բառացիորեն նշել է, որ խոսքը չի ուղղում կոնկրետ անձի՝ կնոջ, մոր, քաղաքացու, այլ դիմում է «ոմն Զարուհի Փոստանջյան» քաղաքական գործչին....»: Ակնհայտ է, որ հեղինակն իր խոսքերի հասցեատեր է դարձրել, ըստ իր կարծիքի, որոշ հատկանիշներով տեսակի մեջ առանձնացող «քաղաքական գործիչ» երևույթին:

Վերը նշվածը համադրելով նաև նրա հաջորդող խոսքերի հետ՝ «նույն Զարուհի Փոստանջյանին խարույկի վրա կենդանի պետք է այրել, ոչ թե որպես ժաննա դ' Արկի, այլ՝ որպես Ռամիլ Սաֆարովի», ակնհայտ է դառնում, որ խոսքի գլխավոր շեշտադրումը կատարված է ո՛չ թե գործողության՝ «խարույկի վրա այրելու» վրա, այլ այն հանգամանքի թե, ըստ իր կարծիքի, ընդհանուր առմամբ ինչ գնահատական պետք է տրվի խոսքի հասցեատիրոջը՝ նրան պետք է վերաբերվել որպես ժաննա դ'Արկի /դրական կերպար/, թե՝ որպես Ռամիլ Սաֆարովի /բացասական կերպար/:

Ընդ որում, ժաննա դ'Արկի անվան հիշատակումը ևս ողջամիտ գնահատման պարագայում պետք է հանգեցնի այն համոզման, որ «խարույկի վրա այրելու» հեղինակի խոսքն ուղղակի պատմական կերպարի վերաբերյալ դասական գրականությունից արված պատկերավոր արտահայտություն է և ո՛չ թե կոնկրետ անձին ուղղված սպառնալիք:

Իսկ ինչ վերաբերում է 2013թ. հոկտեմբերի 26-ին Խաչիկ Ասրյանի կողմից «News.am» լրատվական կայքով արված հայտարարությանը, ապա այն ևս չի կարող հանդիսանալ և ընկալվել սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիք, քանի որ այն իրական և կոնկրետացված չէ, ուղղված չէ որևէ անձի կամ անձանց շրջանակի, ինչպես նաև խոսքը գնում է անորոշ գործողությունների մասին:

Այսինքն, պետության բարձրագույն գործադիր մարմնի ներկայացուցչի փոխնախարարի կողմից զանգվածային լրատվության միջոցով հրապարակային արված վերը նշված արտահայտությունները սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու իրական սպառնալիք չեն հանդիսացել, դրանք իրականացնելու իրական վտանգ չի եղել, որպիսի պայմաններում քրեական գործ հարուցելը ենթակա է մերժման՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով, ուստի ելնելով վերոգրյալից քննիչը կայացրել է հետևյալ որոշումը.

1. Քրեական գործ հարուցելը մերժել Խաչիկ Մայիսի Ասրյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի բացակայության հիմքով:
2. Որոշման պատճենը նյութերի հետ ուղարկել դատավարական հսկողություն իրականացնող դատախազին՝ օրինականությունը ստուգելու նպատակով:
3. Որոշման պատճենն ուղարկել Արթուր Սաքունցին և Զարուհի Փոստանջյանին, նրանց պարզաբանել, որ իրավունք ունեն որոշման պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում բողոքարկել ՀՀ գլխավոր դատախազին»:

20.12.2013 թվականին «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ նախագահ Արթուր Սաքունցը դիմում է ներկայացրել Երևանի քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով վերացնել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Մ.Բաբայանի կողմից 31.10.2013թ.-ին կայացված՝ «Քրեական գործի հարուցումը մերժելու մասին» որոշումը, ներքոհիշյալ հիմնավորումներով.

/տեքստն ամբողջությամբ ներկայացված է բողոքից/

« 2013թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ, «Հայոց արծիվներ» հասարակական կազմակերպության ղեկավար Խաչիկ Ասրյանը «Yerkir.am»-ի (լրատվական կայք) հետ զրույցի ժամանակ բռնության սպառնալիքներ է հնչեցրել ՀՀ Աժ պատգամավոր Զարուհի Փոստանջյանի և նրա հարազատների նկատմամբ:

2013թ. հոկտեմբերի 14-ին «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազին, որում, մասնավորապես նշվում է, որ Խ.Ասրյանի 2013թ. հոկտեմբերի 10-ի հայտարարությունը Զ. Փոստանջյանի հասցեին սպառնալիք է, որը ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի հատկանիշներով առաջացնում է պատասխանատվություն:

2013թ. հոկտեմբերի 29-ին Զ.Փոստանջյանը դիմում է ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին հայտնելով այն մասին, որ միանում է Կազմակերպության 14.10.2013թ. հաղորդումին և խնդրել է ձեռնարկել համապատասխան միջոցներ Խ.Ասրյանին պատասխանատվության ենթարկելու համար:

2013թ. հոկտեմբերի 31-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևորագույն գործերով քննիչ Մ. Բաբայանի կողմից կայացվել է որոշում քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

2013թ. նոյեմբերի 12-ին Կազմակերպության կողմից ներկայացվել է դիմում-բողոք ՀՀ գլխավոր դատախազություն, որով խնդրել եմ վերացնել նախաքննության մարմնի 2013թ. հոկտեմբերի 31-ին կայացրած քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը և գործը ուղարկել նախաքննության:

2013թ. նոյեմբերի 20-ին ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանի կողմից կայացվել է որոշում բողոքը մերժելու մասին:

ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Մ. Ա. Բաբայանի 2013թ. հոկտեմբերի 31-ի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը պատճառաբանվել է հետևյալ կերպ.

Քննիչը մեր կազմակերպության և Զ.Փոստանջյանի դիմումների քննարկման և մի շարք լրատվական միջոցներով Խ.Ասրյանի կատարած հայտարարությունները ուսումնասիրելու արդյունքում պարզել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը բացակայում է, քանզի Խ.Ասրյանի արած հայտարարություններում բացակայում է սպառնալիքի կոնկրետությունը և սպառնալիքի իրական լինելը:

Սպառնալիքի կոնկրետությունը քննարկվող հանցակազմի պարտադիր հատկանիշներից մեկն է, այսինքն՝ այն հանգամանքի հստակությունը, թե ինչպիսի վնաս է սպառնում պատճառել հանցավորը, հանցակազմի մյուս պարտադիր հատկանիշն է սպառնալիքի իրական լինելը: Սպառնալիքը իրական է համարվում, երբ տուժողը բավարար հիմքեր է ունենում անհանգստանալու, վախենալու դրա իրականացումից, կարծում է, որ տրված սպառնալիքի իրականացումը հնարավոր է:

Խ.Ասրյանի կողմից զանգվածային լրատվական միջոցներով Զ.Փոստանջյանի հասցեին հրապարակած մի շարք արտահայտություններ սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու իրական սպառնալիք չեն հանդիսացել, դրանք իրականացնելու իրական վտանգ չի եղել, որի պայմաններում արարքում հանցակազմը բացակայում է:

ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Մ. Բաբայանի 2013թ. հոկտեմբերի 31-ի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու հիմքերը և պատճառաբանությունները.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանի լիազորություններն են (...) օրենքով նախատեսված դեպքերում քննել և լուծել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի, օպերատիվ հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները»:

Հետաքննության մարմինը չի ձեռնարկել համապատասխան միջոցներ հաղորդման մեջ նշված հանգամանքները պարզելու համար, մասնավորապես Խ. Ասրյանին չի հրավիրել բացատրություններ ստանալու այլ որոշում կայացնելիս հիմք է ընդունել լրատվական միջոցներով Խ. Ասրյանի արած հայտարարությունները:

Նախաքննության մարմնի կողմից Զարուհի Փոստանջյանը բացատրություններ տալու չի հրավիրվել, նրանից չի պարզաբանվել, թե Խ. Ասրյանի հրապարակային սպառնալիքներից բացի կան արդյոք այլ սպառնալիքներ, որոնք չեն հրապարակվել:

Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման պատճառաբանական մասում որոշման հեղինակը նշում է. «հանցակազմի մյուս պարտադիր հատկանիշը սպառնալիքի իրական լինելն է», այն իրական է համարվում, երբ տուժողը բավարար հիմքեր է ունենում անհանգստանալու, վախենալու դրա իրականացումից (....): Սպառնալիքի իրական լինելը որոշվում է ինչպես օբյեկտիվ իրադրության գնահատմամբ այնպես էլ տուժողի սուբյեկտիվ ընկալումը հաշվի առնելով»: Նախաքննության մարմնը չէր կարող միայն լրատվական միջոցներով հրապարակված նյութերը ուսումնասիրելով գալ եզրակացության սպառնալիքի իրական լինելու վերաբերյալ: Նախաքննության մարմինը պարտավոր էր բացատրություններ վերցնել Զ.Փոստանջյանից պարզելու համար, նա սպառնալիքը իրական է համարում, թե ոչ և նա բավարար հիմքեր ունի սպառնալիքից անհանգստանալու և վախենալու, որ այն կարող է իրականանալ:

2013թ. հոկտեմբերի 11-ին Զ. Փոստանջյանը մտահոգվելով իր անվտանգության համար, դիմում է ներկայացրել ՀՀ ոստիկանության պետ Վ. Գասպարյանին, խնդրելով ապահովել իր և իր ընտանիքի անդամների անվտանգությունը: Ոստիկանապետը հիմնավոր համարելով Զ.Փոստանջյանի մտահոգությունը, վերջինիս անվտանգությունը ապահովելու ուղղությամբ ձեռնարկել է համապատասխան միջոցներ:

2013թ. հոկտեմբերի 16-ին «azatutyun.am» լրատվական կայքում տեղադրվել է «Փոստանջյանը պահանջում է կալանավորել Խաչիկ Ասրյանին» վերնագրով տեսանյութը, որում ակնհայտ երևում է, թե ինչպես են ոստիկանության աշխատակիցները ապահովում Զ. Փոստանջյանի անվտանգությունը: Վերոգրյալից պարզ է դառնում, որ քննարկվող հանցակազմի պարտադիր հատկանիշ՝ սպառնալիքի իրական լինելն առկա է, քանի որ դրա բացակայության դեպքում ՀՀ ոստիկանապետը Զ.Փոստանջյանի խնդրանքը կմերժեր և ոստիկանության աշխատակիցները չէին ապահովի նրա անվտանգությունը:

Համաձայն վերոհիշյալ մեկնաբանությունների, նախաքննության մարմինը պարտավոր է օբյեկտիվ քննություն իրականացնել, որի կարևոր հանգամանքներից է համարվում գործով բոլոր մասնակիցներին բացատրություններ տալու հրավիրելը կամ, որոնց կողմից տրված տեղեկությունները կարող են էական նշանակություն ունենալ գործի արդարացի լուծման համար: Սույն գործի շրջանակներում՝ Խ. Ասրյանին բացատրություն տալու հրավիրելու արդյունքում վերջինս կարող էր հերքել կամ հաստատել Կազմակերպության կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդման փաստերը, ինչպես նաև Զ.Փոստանջյանին բացատրության հրավիրելու արդյունքում հնարավոր կլիներ պարզեր արդյոք քննարկվող հանցակազմում բացակայում է, թե առկա է սպառնալիքի իրական լինելու հանգամանքը, որը պարտադիր հատկանիշ է քննարկվող հանցակազմի համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար:

Նախաքննության մարմնի կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդման շրջանակներում չի ձեռնարկվել օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար:

Նախաքնության մարմնի վերը թվարկված անգործության կամ դիտավորյալ նման գործողությունների արդյունքում չի ապահովվել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը»:

/բողոքի տեքստի ավարտը/

Ելնելով վերոգրյալից դիմումատուն խնդրել է վերացնել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Մ.Բաբայանի կողմից 31.10.2013թ.-ին կայացված՝ «Քրեական գործի հարուցումը մերժելու մասին» որոշումը և գործն ուղարկել նախաքննության:

Դիմումի քննության վերաբերյալ կայացած դատական նիստի ժամանակ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ նախագահ Արթուր Սաքունցը հայտնել է, որ քննիչի կողմից չի կատարել գործի բազմակողմանի քննություն, բացատրություն վերացնելու համար չի հրավիրել, թե Խ.Ասրայանին և թե Զ.Փոստանջյանին, չի ձեռնարկել համապատասխան միջոցառումներ իրենց կողմից ներկայացված փաստերը ստուգելու և դրա արդյունքում հանցագործության փաստական հանգամանքները վեր հանելու ուղղությամբ: Բողոքաբերը նշել է նաև, որ ինքը դատարանում ամենևին էլ չի ներկայացնում Զ.Փոստանջյանի շահերը, այլ որպես ՀԿ նախագահ, հանրային շահի տիրույթում, իր գիտությամբ հասկանալով, որ Խ.Ասրյանի գործողություններում առկա են հանցագործության հատկանիշներ պարունակող տարեր, ուստի նշվածի վերաբերյալ հաղորդում է տվել, ցանկանալով կանխել նման պաշտոնատար անձանց կողմից իրենց լիազորությունները չարամտորեն օգտագործելով այլ անձանց վարկաբեկելու և նրանց սպառնալիքներ տալու դեպքերը:

Ա.Սաքունցը դատարանին հայտնել է, որ ինքը չունի տեղեկություններ այն մասին, թե հանցագործության վերաբերյալ հաղորդում տալու օրվանից մինչ այսօր Խ.Ասրյանի կողմից կատարվել են որևէ գործողություն վերջինիս կողմից Զ.Փոստանջյանի վերաբերյալ հնչեցված սպառալիքների առումով, միաժամանակ խնդրել է իր կողմից ներկայացված դիմումը բավարարել:

ՀՀ Հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Մ.Բաբայանը 03.02.2014թ.-ին դատարան է ներկայացրել առարկություն «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ նախագահ Արթուր Սաքունցի կողմից ներկայացված դիմումի կապակցությամբ, որով հայտնել է, հետևյալը.

«Դիմումում ՀԿ նախագահ Ա.Սաքունցը խնդրել է վերացնել իմ 2013թ. հոկտեմբերի 31-ի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը և գործն ուղարկել նախաքննության:

Գտնում եմ, որ Ա.Սաքունցի դիմումում նշված միջնորդությունն անհիմն է, չի բխում նախապատրաստված նյութերում առկա փաստական հանգամանքներից, ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նյութերը նախապատրաստվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ, կայացված որոշումը հիմնավոր է, ուստի բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանություններով.

1. Արթուր Սաքունցի, Զարուհի Փոստանջյանի դիմումների քննարկման և զանգվածային լրատվության միջոցներով տարածված Խաչիկ Ասրյանի հայտարարությունների ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ վերջինիս արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիք տալու հանցակազմը հետևյալ պատճառներով.

Այսպես ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով հանցագործություն է համարվում սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել:

Ակնհայտ է, որ քննարկվող հանցակազմի պարտադիր հատկանիշներից է սպառնալիքի կոնկրետությունը, այսինքն, այն հանգամանքի հստակությունը, թե ինչպիսի վնաս է սպառնում պատճառել հանցավորը, հանցակազմի մյուս պարտադիր հատկանիշը սպառնալիքի իրական լինելն է: Այն իրական է համարվում, երբ տուժողը բավարար հիմքեր է ունենում անհանգստանալու, վախենալու դրա իրականացումից, կարծում է, որ տրված սպառնալիքի իրականացումը հնարավոր է: Սպառնալիքի իրական լինելը որոշվում է ինչպես օբյեկտիվ իրադրության գնահատմամբ /սպառնալիքի բովանդակությունը, այն տալու եղանակը, դեպքի վայրը, ժամանակը, իրադրությունը, հանցավորի անձը և այլն/, այնպես էլ տուժողի սուբյեկտիվ ընկալումը հաշվի առնելով: Պետք է նկատի ունենալ, որ տուժողի սուբյեկտիվ ընկալումն ամեն դեպքում արարքի որակման համար ածանցյալ նշանակություն ունի, առաջնայինն օբյեկտիվ իրադրության գնահատումն է:

Քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն, հանցավորը պետք է գիտակցի, որ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիք է արտահայտում, նախատեսի հանրության համար դրա վտանգավոր հետևանքները և ցանկանա դրանց վրա հասնելը:

Կոնկրետ դեպքում, դեռևս 2013թ. հոկտեմբերի 10-ին Խաչիկ Ասրյանը մինչև «խարույկի վրա այրելու» իր խոսքերին անցնելը բառացիորեն նշել է, որ խոսքը չի ուղղում կոնկրետ անձի կնոջ, մոր, քաղաքացու, այլ դիմում է «ոմն Զարուհի Փոստանջյան քաղաքական գործչին....»: Ակնհայտ է, որ հեղինակն իր խոսքերի հասցեատեր է դարձրել, ըստ իր կարծիքի, որոշ հատկանիշներով տեսակի մեջ առանձնացող «քաղաքական գործիչ» երևույթին:

Վերը նշվածը համադրելով նաև նրա հաջորդող խոսքերի հետ «նույն Զարուհի Փոստանջյանին խարույկի վրա կենդանի պետք է այրել, ոչ թե որպես ժաննա դ՚Արկի, այլ որպես Ռամիլ Սաֆարովի», ակնհայտ է դառնում, որ խոսքի գլխավոր շեշտադրումը կատարված է ո՛չ թե գործողության «խարույկի վրա այրելու» վրա, այլ այն հանգամանքի թե, ըստ իր կարծիքի, ընդհանուր առմամբ ինչ գնահատական պետք է տրվի խոսքի հասցեատիրոջը նրան պետք է վերաբերվել որպես ժաննա դ՚Արկի /դրական կերպար/, թե՝ որպես Ռամիլ Սաֆարովի /բացասական կերպար/:

Ընդ որում, ժաննա դ՚Արկի անվան հիշատակումը ևս ողջամիտ գնահատման պարագայում պետք է հանգեցնի այն համոզման, որ «խարույկի վրա այրելու» հեղինակի խոսքն ուղղակի պատմական կերպարի վերաբերյալ դասական գրականությունից արված պատկերավոր արտահայտություն է և ո՛չ թե կոնկրետ անձին ուղղված սպառնալիք:

Այսինքն, պետության բարձրագույն գործադիր մարմնի ներկայացուցչի փոխնախարարի կողմից զանգվածային լրատվության միջոցով հրապարակային արված վերը նշված արտահայտությունները սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու իրական սպառնալիք չեն հանդիսացել, դրանք իրականացնելու իրական վտանգ չի եղել, որպիսի պայմաններում օբյեկտիվորեն ձեռք բերված փաստական հանգամանքների գնահատմամբ որոշում է կայացավել քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

2. Ըստ դիմումի 3.1.1 կետի՝ հետաքննության մարմինը չի ձեռնարկել համապատասխան միջոցներ հաղորդման մեջ նշված հանգամանքները պարզելու համար, մասնավորապես բացատրություններ չեն վերցվել Խ.Ասրյանից և Զ.Փոստանջյանից, այլ որոշում կայացնելիս հիմք է ընդունել լրատվական միջոցներով Խ.Ասրյանի արած հայտարարությունները: Նշել է նաև, որ 2013թ. հոկտեմբերի 11-ին Զ.Փոստանջյանը մտահոգվելով իր անվտանգության համար դիմում է ներկայացրել ՀՀ ոստիկանության պետ Վ.Գասպարյանին՝ խնդրելով ապահովել իր և իր ընտանիքի անդամների անվտանգությունը: Ոստիկանապետը, հիմնավոր համարելով Զ.Փոստանջյանի մտահոգությունը, վերջինիս անվտանգությունը ապահովելու ուղղությամբ ձեռնարկել է համապատասխան միջոցներ:

Գտնում եմ, որ վերը նշված փաստարկները անհիմն են, քանի որ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն քննիչը հանդիսանում է պետական պաշտոնատար անձ, ով լիազորված է հանցագործության դեպքով՝ հանցագործության հատկանիշներ պարունակող իրադարձության փաստով, նախապատրաստել նյութեր և հարուցել քրեական գործ ու ենթակայության կանոններին համապատասխան գործն ընդունել իր վարույթ, ՀՀ

քրեական դատավարության օրենսգրքի դրույթներին համապատասխան մերժել քրեական գործ հարուցելը, ինչպես նաև պարտավոր է ձեռնարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, այդ նպատակով ինքնուրույն ուղղություն տալ քննությանը, ընդունել անհրաժեշտ որոշումներ՝ պատասխանատվություն կրելով դատավարական գործողություններն օրինական և ժամանակին կատարելու համար:

Նշված պարագայում ստանալով Ա.Ա.Սաքունցի դիմումն ու դրան կից ներկայացված ինտերնետային մամուլում տարածված լրատվության միջոցների հաղորդումները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին համապատասխան ձեռնարկել եմ բոլոր հնարավոր և անհրաժեշտ գործողությունները քրեական գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարարությունը ստուգելու նպատակով, ընդ որում, լիազորված լինելով ինքնուրույն ուղղություն տալ քննությանը և պատասխանատու լինելով դատավարական գործողությունների օրինական ու ժամանակին կատարելու համար, ես եմ որոշել դատավարական գործողությունների անհրաժեշտությունն ու դրանց հաջորդականությունը և հանգամանքների բազմակողմանի, լրիվ ու օբյեկտիվ հետազոտման պահանջի պահպանմամբ օրենքով նախատեսված 10-օրյա ժամկետում պարզելով, որ բացակայում են քրեական գործ հարուցելու հիմքերը, այսինքն, Խ.Ասրյանի արարքում բացակայում է հանցակազմը, որպիսի պայմաններում ՀՀ քրեական դատավարության 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, 31.10.2013թ. հիմնավորված, պատճառաբանված և օրինական որոշում եմ կայացրել քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Ինչ վերաբերում է ոստիկանության աշխատակիցների կողմից Զարուհի Փոստանջյանին ուղեկցելու և նրա կողքին գտնվելու հանգամանքին, ապա դա չի կարող համարվել Խաչիկ Ասրյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հանցակազմի առկայության հիմնավորում, քանի որ ինչպես հայտնի է ՀՀ ոստիկանությունը ոչ թե իրավական գնահատական է տվել Խ.Մ.Ասրյանի արարքին, այլ Զ.Փոստանջյանին ուղեկցող աշխատակիցներ է տրամադրել նրա իսկ սեփական դիմումի հիման վրա և ոստիկանության և Զ.Փոստանջյանի միջև ձեռք բերված փոխադարձ պայմանավորվածության շրջանակներում:

Նշվածից պարզ է դառնում, որ իրականությանը չեն համապատասխանում Արթուր Սաքունցի այն պնդումները, թե ես չեմ ձեռնարկել համապատասխան միջոցներ հաղորդման մեջ նշված հանգամանքները պարզելու համար, ինչպես նաև այն, որ առկա է եղել Խ.Ասրյանի կողմից իրական սպառնալիք Զարուհի Փոստանջյանի և նրա հարազատների կյանքի համար»:

Վերոգրյալից ելնելով խնդրել է Ա.Սաքունցի բողոքը քննարկել և մերժել, միաժամանակ խնդրել է բողոքի քննությունն անցկացնել առանց իրենց մասնակցության:

Դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով որոշում է կայացրել բողոքը ՀՀ Հատուկ քննչական ծառայության ներկայացուցչի բացակայությամբ քննելու վերաբերյալ:

Դատարանը, քննության առնելով ներկայացված բողոքը, հետազոտելով դատարան բերված նյութերը, դրանում առկա ապացույցները՝ հանգեց այն հետևության, որ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ նախագահ Արթուր Սաքունցի դիմում-բողոքն անհիմն է և ենթակա՝ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

համաձայն ՀՀ քեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի՝

«Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար»:

Նշվածից հետևում է, որ քրեական գործով վարույթ հարուցելու, ինչպես նաև հանցագործություն կատարած անձանց, հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու դատավարական պարտականությունը դրված է հետաքննության մարմնի **քննիչի** կամ դատախազի վրա:

ՀՀ քեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածում օրենսդիրը սահմանել և նկարագրել է քրեական դատավարության առանցքային սուբյեկտներից մեկի՝ քննիչի, լիազորությունների շրջանակը, ըստ որի՝ վերջինս հայտնաբերելով բավարար հիմքեր և առիթ հարուցում է քրեական գործ, գործն ընդունում է իր վարույթ և կատարում նախաքննություն:

Վերը նշվածից հետևում է, որ քննիչն ինքն է իր իրավասության սահմաններում կատարում լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն, ընդունում ինքնուրույն որոշումներ և ուղղություն տալիս քննությանը ու իր հայեցողությամբ կատարում անհրաժեշտ քննչական անհետաձգելի գործողություններ:

Քրեադատավարական օրենսգիրքը ապացույցների հավաքման, գնահատման և դրանց օգտագործման վերաբերյալ սահմանում է մի շարք դատավարական նորմեր, որոնք մասնավորապես հաստատում են այն, որ քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալներ, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, **քննիչը,** դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի, մեղադրյալի կամ որևէ մեկի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

ՀՀ քեական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածում ամրագրված է, որ՝

«Ապացուցումը՝ գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է»:

Բացի այդ, մի շարք դատավարական նորմեր իրենց դրույթներում պարունակում են ապացույցների հավաքման, դրանց ստուգման և գնահատման մեխանիզմները՝ մասնավորապես

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի համաձայն՝

«Ապացույցները հավաքվում են հետաքննության, նախաքննության և դատական քննության ընթացքում՝ սույն օրենսգրքով նախատեսված քննչական և դատական գործողությունների կատարման ճանապարհով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝

«Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցների վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն

«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2.Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

Վերը նշվածից հետևում է, որ դատավարական որոշակի գործողությունների իրականացումը վարույթի տարբեր փուլերում դրված են կոնկրետ անձանց վրա և նշված ընթացակարգերի պահպանմամբ է, որ տվյալ դեպքում քննիչը հանգում որևէ հետևության:

Դատարանը քննարկման առարկա դարձնելով բողոքաբերի փաստարկները, գտնում է, որ նյութերի քննության ընթացքում ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Մ.Բաբայանը պահպանել է պահանջվող դատավարական կանոնները, կատարել է նյութերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, ինչը թույլ է տվել նրան հանգելու համապատասխան հետևության՝ որոշում կայացնել գործի հարուցումը մերժելու մասին: Դատարանն արձանագրում է, որ քննիչի կայացրած որոշումը պատճառաբանված է, հիմնավորված և բխում է գործի փաստերից:

Բողոքի քննությամբ դատարանում պարզ դարձավ, ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Մ.Բաբայանը ստանալով Ա.Սաքունցի դիմումն ու դրան կից ներկայացված փաստաթղթերը, հաղորդումները և Զ.Փոստանջյանի դիմումը, ձեռնարկել է բոլոր հնարավոր և անհրաժեշտ գործողությունները ստուգելու նպատակով, արդյոք Խ.Ասրյանի գործողություններում առկա են հանցագործության հատկանիշներ, թե ոչ, սակայն նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Ասրյանի կողմից լրատվության միջոցով արված արտահայտությունները սպանության կամ առողջության ծանր վնաս պատճառելու իրական սպառնալիքներ չեն պարունակում, դրանք հնչեցվել են ոչ թե կոնկրետ անձի, այլ երևույթի վերաբերյալ, այլ կերպ, դրանք իրականացնելու իրական վտանգ որևէ մեկի՝ այդ թվում Խաչիկ Ասրյանի, կողմից չի եղել:

Այս պայմաններում, դատարանն արձանագրում է, որ բողոք բերող «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ նախագահ Արթուր Սաքունցի կողմից դատարանին չներկայացվեցին բավարար հիմնավորումներ՝ քննիչի կողմից նյութերի քննության ընթացքում պատգամավոր Զ.Փոստանջյանի իրավունքներն ու ազատություններն խախտելու որևէ դրսևորման վերաբերյալ, ինչը հիմք է բողոքը մերժելու համար:

Այսպիսով, դատարանը գտնում է, որ բավարար չեն հիմքերը՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Մ.Բաբայանի կողմից 31.10.2013թ.-ի կայացված «քրեական գործ հարուցելը մերժելու մասին» որոշումը վերացնելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

«...Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին...»:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44, և 290-րդ հոդվածներով, դատարանը

ՈՐՈՇԵՑ

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ դիմումը՝ ՀՀ Հատուկ քննչական ծառայության հատկապես կարևորագույն գործերով քննիչ Մ.Բաբայանի 2013թ. հոկտեմբերի 31-ի՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ, մերժել:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ հրապարակման պահից 10 օրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Մ.ՄԱԿՅԱՆ